

## Թ Ա Խ Ի Շ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԼԵԱՆՑԻ

Սիրտ չը կալ վերաս, թանկագի՞ն ընկեր,  
Մասնակից լինեմ քո ուրախութեան.  
Հոգիս տիսուր է. մըռալլ խորհուրդներ  
Պաշարել են ինձ, և իմ վիշտ, ցաւեր  
Հեչ չ'ունին գարման:

Մի նալիւ, հոգեակ, ծիծաղիս վերան.  
Ճըպիտ է գէմքիս, բայց այս կըրծքի տակ  
Եթէ նալէիր... ալնտեղ անսուհման  
Խորին տառապանք, ալնտեղ բարկութեան  
Բորբոքւող կըրակ:

Կ'ուզես իմանալ թէ ինչ է պատճառ  
Իմ լուռ թախծութեան, իմ դառն ցաւերի.  
Նոքա անթիւ են, ընկեր, անհամար.  
Նոցա պատմելու չը կալ մի հընար,  
Ընկեր սիրելի:

Ինչպէս չը ցաւես, երբ ցեխ է ձըգւած  
Անվեհեր հոգու առաքինութիւն,  
Եւ իդէալներն քո շուրջ խորակւած  
Եւ ողորմելի բեկորներ գարձած,  
Ինչպէս հընութիւն:

Ինչպէս չը ցաւեռ, երբ ազնիւ սըրտերն  
Ալստեղ յուսաբեկ տիս վախ են քաշում,  
Մինչ ալստեղ անսիրտ խեղկատակներն,  
Պարծենկոտ, յանդուգն մեծամիտներն  
Ցընծում են, հըրճւում:

Ինչպէս չը պայթես, երբ խօսքը սիրու  
Եւ եղբայրական անկեղծ յորդորանք,  
Առաքելական քարոզք լուսոյ  
Մընում են միայն լոկ «ձայն բարբառոյ»  
Անապատումն ամայի, անկեանք:

Համեստ աշխատանք—ծաղրանքի մատնւած.  
Յարդանք, պատկառանք—տըրւած մոռացման.  
Լըքաի կըրքերըն ասպարէզ ելած,  
Առողջ մարմինը նեխւած, քայքայւած  
Եւ հասած անկման...

Ո՞ւր է անխարդախ, անկաշառ այն սէրն,  
Որով տոգորւած՝ նա խաչ բարձրացաւ.  
Ո՞ւր անհետացան նորա քարոզներն,  
Ինչո՞ւ լուսաւոր նորա պատկերն  
Հանդաւ, մարեցաւ:

Օ՛հ, բաւ է, ընկեր, ինձ մի՛ չարչարիլ.  
Իմ դառն ցաւերին էլ չը կալ վախճան.  
Ինչպէս Մեծն Ովկեան, նոքա չեն քամփիլ,  
Մինչև գերեզման նոքա չեն հատնիլ,  
Ազնի՛ւ բարեկամ: